ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 1 -ի թիվ 259 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԳԱՌՆԱՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՐԱՊ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սրապ Գրիգորյանի 2026 թվականի հուլիսի 1-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սրապ Գրիգորյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 13-ը ներառյալ:

2.Սրապ Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Համբարձում Թադևոսյանին:

3.Սրապ Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 14-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/3/2026 12:05:02 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի 1

ք. Աշտարակ